ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ԻՐԱՔԻ ՀԱՅԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ

Մայիսի 29–31-ին Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում տեղի ունեցավ «Իրաքի հայերը» թեմայով գիտաժողով: Այն կազմակերպել էր Հայկազյան համալսարանի հայկական սփյուռքի ուսումնասիրության կենտրոնը: Պաշտոնական բացման հանդիսությանը ներկա էին Իրաքի Հայոց Առաքելական թեմի առաջնորդ Գերշ. Ավագ արք. Ասատուրյանը*, Լիբանանի թեմի առաջնորդ* Գերշ. Շահե սրբ. Փանոսյանը, Գևորգ եպս. Ասատուրյանը՝ *օգն. եպս. Բեյրութի Հայ կաթողիկե պատրիարքական թեմին, Հայկազյան համալսարանի նախագահ* Վեր. դր. Փոլ Հայտոսթյանը*, Լիբանանում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան* Սամվել Մկրտչյանը*, ՀՀ սփյուռքի նախարարության ներկայացուցիչներ, Իրաքի Առաջնորդարանի Կենտրոնական վարչության փոխ-ատենապետ* Սարգիս Չոլաքյանն *ու ատենադպիր* Սարգիս Գոթունյանը*, իրաքահայ հյուրեր, կուսակցությունների և մշակութային միությունների ներկայացուցիչներ, լիբանահայ մամուլի պատասխանատու խմբագիրներ, մշակութային դեմքեր, Միջին Արևելքի հայ համայնքների պատմությամբ հետաքրքրվող մտավորականներ:*

Հայկազյան համալսարանի հայկական սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն Անդրանիկ Տագեյանն *իր բացման խոսքում, համառոտ տեղեկություններ տալով գիտաժողովի ծնունդի, կազմակերպման գործընթացի և մասնակիցների մասին, բեմ հրավիրեց «այս գիտաժողովին հավատացող և անոր հաջողության նյութական մեծագույն նպաստը բերող» Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հայկական համայնքների բաժնի տնօրեն* Ռազմիկ Փանոսյանին: *Վերջինս ներկայացրեց հիմնարկության հիմնումը, դերը, սկզբնական տարիները՝ անդրադառնալով տասնամյակների ծավալած գործունեությանն ու անցած ուղուն, Միջին Արևելքի մեջ կատարած տնտեսամշակութային զարգացման նպաստներին և առանձնացրեց Իրաքի մեջ կատարած ներդրումները:*

Գիտաժողովի ութ նիստի ընթացքում կարդացին 34 զեկույց՝ Ֆիլիպիններից, ԱՄՆ-ից, Հայաստանի Հանրապետությունից, Իրաքից, Եգիպտոսից, Սիրիայից և Բեյրութից ժամանած մասնագետներ: Զեկույցները խմբավորվել էին ըստ բնագավառների. 1) Անցյալ պատմություն, 2) Նախաեղեռն, Յեղասպանություն, գաղթավայրեր և գաղթականության աջակցություն, 3)Հայկական կյանքի կերտումն Իրաքի մեջ, 4) Իրաքահայ նպաստը, 5) Հայաստան և իրաքահայություն, 6) Իրաքահայերն այսօր:

Ծնունդով Բասրացի (Իրաք) Պետրոս Թովմասյանն *իր «Աբբասյան խալիֆայության վերջին պատմաշրջանը և Հայկական ծագումով խալիֆաները (991–1258 թթ.)» զեկույ-*

ցում ներկայացրեց Աբբասյան խալիֆայության երեսունյոթ խալիֆաից ծագումով հայ երեքին: Մանրամասնեց նրանց քաղաքականությունը, մշակույթի և այլ կրոնների հանդեպ կեցվածքն ու արժևորեց խալիֆայության նպաստը XI դ. մշակութային և գիտական վերելքին:

Կահիրեի համալսարանի հայկական ամբիոնի վարիչ Սալահ Մահջուբն *ամփոփ ներկայացրեց կենտրոնի գործունեությունը և ընդգծեց Մուսուլի հայազգի կառավարիչ Բադր էլ Դին Լուլուի (XIII դ.) քաղաքական գործունեությունն ու դերը շրջանի խառն բնակչության համակեցության պահպանման գործում:*

Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի դասախոս Գայանե Պողոսյանը *ներկայացրեց XVIII դարում Բաղդադում գրված, ցարդ ծանոթ միակ հայերեն բժշկարանը՝ մանրամասն տալով բովանդակությունը, յուրահատկությունը, լեզուն: Եզրակացրեց, որ ձեռագիրը որոշ գաղափար է տալիս 1760–1770 թթ. բաղդադահայության կենցաղի և հետաքրքրությունների մասին:*

Կահիրեի համալսարանից հրավիրված Ուաֆա Մահմուդն *անդրադարձավ XVIII–XX դդ. Մուսուլում ապրած Չաքմաքճյան ընտանիքի գործունեությանը, ինչպես նաև՝ բերած նպաստը Եղեռնից մազապուրծ հայ գաղթականներին և Իրաքին: Ու. Մահմուդի երկրորդ զեկույցը նվիրված էր իրաքահայ հանրահայտ բարերարուհի Սառա Իսկենտերյանին (Սառա Խաթուն կամ Սառա Զանգինա): Նա արժևորեց Սառայի կյանքը և ներդրումը Իրաքի քաղաքական պատմությանն ու իրաքահայությանը:*

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. թ. Արտակ Մաղալյանը *ներկայացրեց XVII–XIX դդ. իրաքահայությանը՝ հիմք ընդունելով Սերովբե Կարնեցու, Բարունակ Բեյ Ֆերուհիանի և մի քանի օտար ճանապարհորդների (Ջորջ Մանվարինկ, Պեդրո Տակսիերո, Պեդրո դելլա Վիլլա, Յակոբ Վիլոթ, Ջ. Ռ. Վիլսթիդ) ուղեգրությունները:*

Բնիկ բաղդադցի Մարլեն Մելքոնյան-Սեդրաքյանը *հարազատորեն նկարագրեց բաղդադցի հայերի դիմանկարը, մտայնությունը, կենցաղը, խոսակցական լեզուն, բարբառը և այլն:*

Հայտնի ցեղասպանագետ Հիլմար Քայզերը *կենտրոնացավ Հայոց Ցեղասպանության Մուսուլ նահանգի աշխարհագրական դիրքին ու դերին: Նա մատնանշեց, որ 1915 թ. մայիսին Օսմանյան կայսրության Ներքին գործոց նախարարությունը Մուսուլի որոշ շրջանները նախատեսել էր իբր «հայ տեղահանվածների համար երեք վայրերից» մեկը, սակայն շատ փոքրաթիվ հայերի վիճակվեց հասնել նշված վայրը, քանի որ «նպատակը Մուսուլ հասցնելը չէր, այլ նրանց սպառելն էր Մուսուլի ճանապարհին երկարող անապատների մեջ»:*

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի աշխատակից, ծնունդով բասրացի, պ. գ. թ. Սեդա Օհանյանը *ներկայացրեց 1918 թ. Վանի վերջին նահանջը, գաղթականության անցած ուղին, Բաքուբայի և Նահր Օմարի գաղթականները՝ հիմք ունենալով Գաղ-*

թականության կոմիտեի նախագահ, 1915 թ. Փեսանդաշտի ինքնապաշտպանության ղեկավար Լևոն Շաղոյանի՝ ցարդ անտիպ արխիվը, ՀՀ ազգային արխիվի նյութերն ու մի քանի ականատեսների հուշեր: Ս. Օհանյանի երկրորդ զեկույցը նվիրված էր Բասրայի հայության անցյալին ու ներկային: Նա նշեց, որ Իրաքի հայկական երկրորդ մեծ համայնքը ձևավորվել է Բասրայում, որտեղ հայերը Նոր Ջուղայից զանգվածաբար հաստատվել են XVIII դ. առաջին քառորդին:

Հիմնվելով Հովհաննես քահանա Սիմոնյանի տոմարի վրա՝ Անդրանիկ Տագեսյանը *մանրամասնեց Բաքուբա որբանոցի (հիմնված 1918 թ. նոյեմբերի 7-ին) բնակիչների (660 տղա և 386 աղջիկ) ժողովրդագրությունը, տարիքային պատկերը՝ շեշտելով հասարակության մեջ նման տարիքի մարդկանց առաջացող մտայնությունը:*

Սընթ Բենեդիքթ քոլեջի Աստվածաբանության բաժանմունքի և Միննեսոթայի Սընթ Ջոնզ համալսարանի դասախոս Ջոն Արմաջան *ներկայացրեց Իրաքի պատմության չորս՝ օսմանյան ժամանակաշրջանի, բրիտանական, ազգային ու ամերիկյան հանգրվանները: Քննարկման ենթարկեց դրանց որդեգրված սահմանադրությունների՝ հայերին և մյուս փոքրամասնություններին առնչվող հատվածները:*

Սփյուռքի տարածքին, համայնքային կյանքին յուրահատուկ է հասարակական կազմակերպությունների գործունեությունը: Բացառություն չէ իրաքահայ համայնքը: Այս ոլորտը ներկայացրեցին իրաքահայ հասարակական գործունեության անմիջական մասնակիցներ, ամերիկաբնակ Համբարձում Աղբաշյանը *(Իրաքի հայկական բարեգործական ընդհանուր միություն), հայրենադարձներ* Շաքե Աշճյան-Արծիվյանը *(Իրաքի հայ տիկնանց մշակութային միություն և կիրակնօրյա հավաք) և* Վարանդ Պետրոսյանը *(Բաղդադի հայ երկսեռ երիտասարդաց միություն):*

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բ. գ. դ. Վարդան Դևրիկյանը *հանգամանորեն խոսեց իրաքահայ թեմի պատմության մասին: Քերքուքի հայության XX դարի պատմությանն անդրադարձավ Բեյրութահայ երիտասարդ հետազոտող* Պետիկ Թորոսյանը*: Լիբանանահայ* Ռաֆայել Ումուտյանը *ներկայացրեց Իրաքի հայ կաթողիկե համայնքի պատմությունը՝ սկզբնավորումից (1758 թ.) մինչև մեր օրերը: ՀՀ ազգային արխիվի մասնագետ, պ. գ. թ.* Գոհար Ավագյանը *ներկայացրեց Իրաքի կրթական համակարգը և դպրոցները մինչև վերջիններիս պետականացումը՝ 1974 թ.՝ հիմնվելով Ազգային արխիվում տեղ գտած նյութերի վրա:*

Իրաքահայ համայնքի մամուլի պատմության մեջ միակ լուրջ պարբերաթերթը հանդիսացող «Գոյամարտ»-ի պատմականը (1948–1954), դրա անցած ուղին լուսարձակի տակ առավ Բեյրութի «Ազդակ» օրաթերթի երիտասարդ խմբագիր Նորա Բարսեղյանը*:*

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի աշխատակից, բ. գ. թ. Արծվի Բախչինյանը *հանդես եկավ «Իրաքահայության նպաստն իրաքյան և միջազգային մշակույթին» զեկուցմամբ՝ ներկայացնելով XX դ. կեսից մինչև մեր օրերն Իրաքում գործած մի շարք*

արվեստագետների (հիմնականում՝ կատարողական արվեստի բնագավառում), ինչպես նաև՝ աշխարհի տարբեր երկրներում հանդես եկած, ծնունդով իրաքահայ մշակութային գործիչների:

Իրաքի անկախացումից (1921 թ.) հետո, պետականաշինության մեջ իր լուրջ ներդրումն ունեցած Իրաքի դատական գրասենյակի պաշտոնակատար և սահմանադրության ծնունդին գործուն մասնակից Տիգրան Էքմեքճյանի (1880–1951) մասին զեկուցեց Հայկազյան համալսարանի արվեստի և գիտության բաժանմունքի տեսուչ, պրոֆ. Արտա Արսենյան-Էքմեքճին*:*

1958 թ. զինվորական հեղաշրջումից հետո, Իրաքի հանրապետության հինգ նախագահի (Աբդուլ Քերիմ Կասըմ, Աբդուլ Սալամ Արըֆ, Աբդուլ Ռահման Արըֆ, Ահմեդ Հասան Էլ-Բըքռ և Սադդամ Հուսեյն) պաշտոնական լուսանկարիչ Հովհաննես Չուքասզյանի (1914–1994) մասին ելույթ ունեցավ նրա դուստր՝ Արմինե Չուքասզյանը:

Ծնունդով իրաքցի (այժմ՝ հայրենադարձ) Արա Աշճյանը *մանրամասն ուսումնասիրել է իրաքահայ կարկառուն դեմքերի նպաստը և՛ իրաքահայության, և՛ Իրաքի պետության զարգացման ու վերելքին: Նույն բնույթի զեկույց ներկայացրեց հալեպահայ (այժմ՝ հայաստանաբնակ) բանասեր* Միհրան Մինասյանը*, ով առանձնացրեց արաբերեն ստեղծագործած իրաքահայ գրողներին՝ Յակուբ Սարգսին, Հ. Ներսես Սայեղյանին, բժիշկ Գրիգոր Ասթարճյանին և այլք:*

Կալիֆորնիայի նահանգային համալսարանի Նորթրիջի ժամանակակից և դասական լեզուների ու գրականության բաժանմունքի հայագիտության բաժնի տնօրեն պրոֆ. Վահրամ Շեմմասյանը*, հիմնվելով բրիտանական արխիվների վրա, մանրամասնեց 1921–1922 թթ. գաղթականության ներգաղթը Խորհրդային Հայաստան, քաղաքական իրավիճակը, պայմանները, դժվարությունները և այլն:*

Երիտասարդ ազգագրագետ Խորեն Գրիգորյանը *դաշտային ուսումնասիրական տվյալների լույսի տակ ազգագրական դիտանկյունից ներկայացրեց Հայաստանի Դարբնիկ գյուղում հաստատված իրաքահայերին, մանրամասնեց նրանց կենցաղը, Հայաստանն իբրև հայրենիք ընկալելը, աշխատաշուկան և այլն:*

Երևանի պետական համալսարանի Սփյուռքագիտության ամբիոնի վարիչ, պ. գ. դ. Արման Եղիազարյանը *ներկայացրեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեությունը Իրաքում արտասահմանյան ենթահողի վրա:*

Հայաստանի Ամերիկյան Համալսարանի հետազոտությունների պատասխանատու Անուշ Բեժանյանը *վերլուծեց ՀՀ արտաքին քաղաքականությունը 2003 թ. իրաքյան պատերազմի դիտանկյունից:*

Գիտաժողովի վերջին նիստում անդրադարձ եղավ Իրաքի ժամանակակից խնդիրներին: ԵՊՀ արաբագիտության ամբիոնի դասախոս, բ. գ. թ. Սոնա Տոնիկյանը *քննարկման ենթարկեց 1991–2015 թթ. ՀՀ հարաբերությունները իրաքահայության հետ: ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակից* Ժենյա Գյուլբենկյանը *ներկայաց-*

րեց նախարարության ծավալած գործունեությունը և 2008–2017 թթ. Հայաստանում հաստատված իրաքահայության բերած նպաստը:

Հայագիտական Կենտրոնի երիտասարդ աշխատակից Եղիա Թաշճյանն *անդրադարձավ շատ նուրբ, խիստ այժմեական հայ-քրդական հարաբերություններին՝ քննարկելով Իրաքյան Քրդստանում բնակվող հայության անցյալի, ներկայի ու ապագայի զարգացման հեռանկարը:*

Առողջական պատճառներով գիտաժողովից բացակայած, ամերիկաբնակ իրաքահայ Խաչիկ Ճանոյանի *զեկույցը ընթերցեց Հայկազյան համալսարանի հայագիտական բաժնի ուսանող* Վանա Դանիելյանը*: Զեկույցը վերաբերում էր Իրաքից հայության արտահոսքին, դրդապատճառներին, երկրի քաղաքական իրավիճակին և Ամերիկայի մեջ նրանց գործունեությանը:*

Գիտաժողովի վերջին զեկուցողն էր Լիբանանում ՀՀ դեսպանատան աշխատակից փ. գ. թ. Վլադիմիր Պողոսյանը*, ով համակողմանի ներկայացրեց Իրաքի հայոց թեմի՝ շուրջ չորս տասնամյակի թեմակալ, արդյունաշատ Հոգեշնորհ Ավագ արք. Ասատրյանի կյանքն ու գործունեությունը և նրա անմնացորդ նվիրումն իրաքահայ թեմին:*

Հետաքրքիր էին նաև երեկոյան լսված զույգ դասախոսությունները, որոնցից առաջինը ներկայացրեց դատավոր Քրիսթոֆր Յանգը *(«XIX դարի իրաքահայ առնչությունները բրիտանացիների հետ»), իսկ երկրորդը՝ Իրաքի Հայոց Առաջնորդարանի ատենադպիր* Սարգիս Գոթունյանինն *էր, ով խոսեց իրաքահայ համայնքի ներկա իրավիճակի և ապագայի մասին:*

Ուշագրավ էր նաև Սեդա Օհանյանի *«Իրաքի հայ համայնքը 20-րդ դարուն» մենագրության շնորհանդեսը:*

Գիտաժողովի նյութերը գրեթե ամբողջովին ընդգրկում էին իրաքահայ համայնքի կյանքի բոլոր ոլորտները՝ միջին դարերից մինչև մեր օրերը:

Արտասահմանում հայկական միակ բարձրագույն ուսումնական հաստատության՝ Հայկազյան համալսարանի հայկական սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի կազմակերպած վերջին չորս տարվա գիտաժողովները՝ նվիրված Լիբանանի, Սիրիայի, Հորդանանի և Իրաքի հայ համայնքներին, անկասկած, պետք է նպաստեն վերոհիշյալ համայնքների զարգացման փուլերն առավել ևս ուսումնասիրելուն, ինչպես նաև՝ սփյուռքագիտության պատմագրության զարգացմանը:

ՍԵԴԱ ՕՀԱՆՅԱՆ